

անհնարին սգոյն եւ անմխիթար վշտացն: Այլ եւս առաւել աղմուկ եւ խռովութիւն կու արկանեն ի մէջ աղգիս Հայոց յաղագս Պատրիարքառնելոյ: Քանզի Գրիգորս այս մարտ եղեալ էր զհետ Յովանէսին մինչ զնա փախուցեալ էր ի Պրուսայ, եւ ինքն տիրեալ էր բռնութեամբ առանց հրամանաց արքունեացն, եւ ի տեղի իւր եղեալ էր զԵզնկացի Յովանէս Պակթամուր ձագն եւ ինքն գնացեալ էր ի Լեհաց աշխարհն: Յետոյ երբ Հայերը Ռատակէս Խարբերդցի վ.ին ջանիւք կը յաջողին Պալաթու Ս. Միք. Հրեշտակապետի յունական փակ եկեղեցին ձեռք բերել, «կրկին նախանձ կու շարժին Կեսարացոյն կողմանէ ոմանք չարահնար անձինք, այլ եւ Էրզրումցի Մինաս վ.ն եւ Երզնկացի Պէկթամուր ձագ Յովհ. Եպսն. որ ի տեղի իւր եղեալ էր զսա Կեսարացի Գր. վ.ն, եւ ինքն ի Լեհաց աշխարհն էր գնացեալ: Եւ սոքա իբրու տեղապահք լինելով Կեսարացոյն, հակառակ էին Արիստակէս վ.ին եւ ամենայն քահանայից եւ ժողովրդոցն Պալաթցոց, արգիլել կամելով զմիւս քանութիւն նոցա եւ զլինութիւն եկեղեցւոյն խափանելով, եւ զԱրիստակէս վ. հալածական առնելով, որ զողեալ կայր ի Ղալաթիայ ի նոցանէ եւ նոցին չար խորհրդոցն: Ղալաթիա ապաւինած էր յետոյ նաեւ ինքն Գր. Գարանաղցի, երբ եկեղեցւոյն շինութիւնն աւարտելէն ետեւ պնակի ինդրոյ համար իրեն դէմ ապերախտեցան քահանայք եւ զինք հայհոյեցին: Այս ժամանակագրութենէն ալ յայտնի է, որ Յովհ. Խուլ